Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետ Կ. Գուլոյանը

ք.Հրազդան 22.03.2016թ. ժամը 11.^{00}

ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

-Ս.Կարապետյան-ՀՀ գյուղատնտեսության նախարար

-Ա.Մարտիրոսյան-ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ներկայացուցիչ

-Վ.Սեպոյան-ՀՀ Կոտայքի մարզպետի օգնական

-Մ.Եղիազարյան-ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

-Ա.Օհանյան-ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

-Մարզի խորհրդի անդամ համայնքների ղեկավարներ

-Մարզի նորաստեղծ կոոպերատիվ տնտեսությունների նախագահներ

-ՀՀ գյուղատնտեսության նախարարության ենթակայությամբ գործող մարզային կառույցների ղեկավարներ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. **Մարզում գարնան գյուղատնտեսական նախապատրաստական աշխատանքների մասին:**

/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ. Եղիազարյան/

ԼՍԵՑԻՆ՝

ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ.Եղիազարյանի զեկուցումը մարզում գարնան գյուղատնտեսական նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն:/Կցվում է/:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին առանձնակի ուշադրություն դարձնել՝

-Վարելահողերի նպատակային օգտագործմանը:

-Վիճակագրական հաշվետվությունների ներկայացման ժամկետներին և տվյալների հավաստիությանը:

-Անասնագլխաքանակի պետական պատվաստումների իրականացման ժամկետների և որակի ապահովմանը, ինչպես նաև սանիտարահիգիենիկ իրավիճակի պահպանմանը:

Կ.ԳՈՒԼՈՅԱՆ

ԳԱՐՆԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ /2016թ/

Գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ու բարձր բերքի ապահովումը տնտեսություններում կապված է գարնան գյուղատնտեսական աշխատանքներին նախապատրաստվելուց:

Գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստումը համալիր միջոցառումների մի շղթա է, որոնց կատարման համար պահանջվում են համատեղ միջոցառումներ, կոնկրետ գործողություններ, ժամկետներ և պատասխանատուներ: Ապագա բերքի ստացումն էապես կախված է գարնան գյուղատնտեսական աշխատանքների ճիշտ ժամկետների ընտրությունից: Տարիների փորձը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր տարվա բարձր ու կայուն բերքի ստացման երաշխիք է հանդիսանում նախորդ տարվա աշնանը և տվյալ տարվա գարնանը կազմակերպվող ագրոտեխնիկական համալիր միջոցառումների ճիշտ կիրառումը, այդ թվում բարձրորակ սերմացուներով ու տնկանյութով աշնանացանի և գարնանացանի ժամանակին ու որակով կատարումը, ոռոգման, պարարտացման ու բույսերի պաշտպանության միջոցառումների ժամանակին իրականացումը և վառելիքով ապահովումը: Գյուղատնտեսությունը հանդիսանալով բաց երկնքի տակ կազմակերպվող բազմաճյուղ արտադրություն, շատ հաճախ ուղեկցվում է լուրջ դժվարություններով, բնական տարբեր աղետներով, որոնք պահանջում են համագործակցություն կառավարման շահագրգիռ մի շարք մարմինների հատկապես տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, ինչպես նաև գյուղացիական տնտեսությունների միջև:

Մարզում այս տարի որոշակի աշխատանքներ են կատարվել գարնան գյուղատնտեսական աշխատանքները որակով կատարելու և սեղմ ժամկետում ավարտելու համար: Մարզպետարանի Գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունը շահագրգիռ մի շարք գյուղատնտեսական կառույցների հետ համատեղ համայնքներում և առանձին տնտեսություններում կազմակերպել է խորհրդատվական աշխատանքներ գարնանացանի շրջանում իրականացվող միջոցառումների վերաբերյալ;

Այսօրվա դրությամբ մարզում գյուղատնտեսական տեխնիկայի պատրաստ լինելու վերաբերյալ ստացված տվյալները վկայում են, որ գարնանացանը հնարավոր կլինի իրականացնել սահմանված ագրոտեխնիկական ժամկետներում:

Գյուղացիական տնտեսությունները, ինչպես նաև բնազավառը սպասարկող կազմակերպությունները սեփական և փոխառու միջոցների անբավարարության պատճառով հայտնվել են ֆինանսական ծանր վիճակում և բատ էության գրկված են շրջանառու միջոցների համալրման, ընդլայնված վերարտադրություն կազմակերպելու հնարավորությունից: Բարեփոխումների իրականացման շնորհիվ վերջին տարիներին գյուղատնտեսությունում նկատվում է արտադրության կայունացում, իսկ առանձին ճյուղերում նաև աճի միտումներ, այն արդյունք է ՀՀ կառավարության կողմից իրականացված 2011-2014 թվականներին սերմանբուծության և սերմարտադրության ծրագրի ներդրման և մի շարք այլ միջոցառումների:

2015թ. բերքի տակ կատարվել է 6665 հա աշնանացանի ցանք, որը կազմում է մարզի ընդհանուր վարելահողերի 17.6 տոկոսը: Աշնանացանի պակասը մեղմելու և վարելահողերի նպատակային օգտագործման ծավալը բարձրացնելու նպատակով այս տարի նախատեսվում է կատարել 12800 հա գարնանացան մշակաբույսերի ցանք, այդ թվում՝

Գարնանացան ցորեն	235 հա
գարնանացան գարի	3495 հա
հաճար	3000 հա

հատիկաընդեղեն	267 հա
եգիպտացորեն	10 հա
կարտոֆիլ	880 հա
բանջարեղեն	1350 հա
տեխնիկական մշակաբույսեր	60 հա
կերային մշակաբույսեր	3503 հա

Կառավարության կողմից շուկայականից 25-30 տոկոս ցածր գներով ըստ համայնքների կողմից ներկայացրած հայտերի մարզին հատկացվել է 1710 տոննա ազոտական պարարտանյութ /57 համայնք/, 290 հազար լիտր դիզվառելանյութ /39 համայնք/, 58.4 տոննա ֆոսֆորական պարարտանյութ /24 համայնք/, 47.7 տոննա կալիումական պարարտանյութ /24 համայնք/, 150 տոննա գարնանացան գարու սերմացու / 39 համայնք/, 3 տոննա առվույտի սերմացու / 15 համայնք/: Սերմացուների ներկրման և գումարների վճարման աշխատանքներն ավարտվել են, իսկ պարարտանյութերի և դիզ. վառելիքի ներկրումն ընթացքի մեջ է:

Գարնանացանին զուգահեռ մարզի գյուղացիական տնտեսություններում միաժամանակ իրականացվում է շուրջ 2500 հա պտղատու այգիների բուժման, էտի ու ձևավորման, 5000 հա աշնանացանի սնուցման աշխատանքներ:

Գյուղատնտեսական մշակաբույսերի և հետագա բերքի կարևորագույն նախապայմաններից մեկն էլ ոռոգման համակարգի անխափան աշխատանքն է, որի ուղղությամբ մարզի ՋՕԸ-երում կատարվում են նախապատրաստական աշխատանքներ: Մարզում շահագործվում է 825 կմ ոռոգման համակարգ, համաձայն մարզպետի կողմից նախանշված ժամկետի ավարտվել են մաքրման և ընթացիկ վերանորոգման աշխատանքները: Այժմ ընթացքի մեջ են ջրօգտագործողների հետ պայմանագրերի կնքման և կանխավճարի գանձման աշխատանքները:

1. Առաջարկել համայնքների ղեկավարներին՝ առանձնակի ուշադրություն դրսևորել

ա/ վարելահողերի նպատակային օգտագործման ուղղությամբ դրսևորել առանձնակի ուշադրություն

բ / վիճակագրական հաշվետվությունների ներկայացման ժամկետների և տվյալների հավաստիության նկատմամբ:

գ / ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել համայնքի տարածքում իրականացվող սանիտարահիգիենիկ իրավիճակի և անասնագլխաքանակի պետական պատվաստումների իրականացման ժամկետների և որակի նկատմամբ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Մ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ